

ՏԵԼԵՈԼՈԳԻԱԿԱՆ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ, ԹԵ՞ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՍՈՒՄԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Չեմպելը գիտական բացատրության արդեն դասական համարվող ձևակերպումը տվել է 1942 թ. հրատարակած «Ընդհանուր օրենքների դերը պատմության մեջ» և 1948 թ. Օպենհայմի հետ համատեղ հրատարակած «Բացատրության տրամաբանությունը» հոդվածներում: Այդ ժամանակից ի վեր մեթոդաբանական գրականության մեջ չեն դադարում բացատրության հեմպելյան մոդելի շուրջն ընթացող վիճաբանությունները: Մյուս հարցերի հետ մեկտեղ այդ մոդելի հակառակորդներին պակաս վիճահարույց չէր թվում նաև, այսպես կոչված, «տելեոլոգիական բացատրության» հարցը, որի քննարկման ասպարեզն ընդգրկում էր պատմականության բնույթ կրող բնագիտական տեսությունները, ինչպես, օրինակ, էվոլյուցիոն տեսությունն է, և հասարակագիտությունը, որոնցում եղած բացատրությունները հեմպելյան մոդելի չափանիշներին չէին համապատասխանում:

Գիտական բացատրության հեմպելյան մոդելն այլ կերպ անվանում են նաև պատճառական բացատրություն կամ բացատրություն ընդհանուր օրենքի միջոցով: Այդ մոդելի տրամաբանական կառուցվածքը հետևյալն է. *էքսպլանանդում*, որը բացատրության ենթակա երևույթը նկարագրող E նախադասությունն է, և *էքսպլանանս*, որը պարունակում է նախորդող հատուկ պայմանները հաստատող C_1, C_2, \dots, C_k նախադասությունները և ընդհանուր օրենքները ներկայացնող L_1, L_2, \dots, L_r նախադասությունների բազմությունը¹: Չեմպելյան մոդելը մեթոդաբանական տեսակետից մեծ նշանակություն ունի, քանի որ միայն այդ մոդելում առկա տրամաբանական համարժեքության չափանիշների շնորհիվ գիտական բացատրությունը մինչգիտական սինգուլյար կշռադատությունից վերածվեց գիտական հետազոտության մեթոդի (այդ բառի բուն իմաստով): Ըստ Չեմպելի՝ յուրաքանչյուր գիտական բացատրություն պետք է բավարարի համարժեքության հետևյալ չափանիշները.

(R₁) էքսպլանանդումը պետք է էքսպլանանսի տրամաբանական հետևանքը լինի, այլ խոսքով, էքսպլանանդումը պետք է տրամաբանորեն բխեցնելի լինի էքսպլանանսում պարունակվող ինֆորմացիայից, այլապես էքսպլանանսը էքսպլանանդումի համար բավարար հիմքեր չի պարունակի,

(R₂) էքսպլանանսը պետք է բովանդակի ընդհանուր օրենքներ, որոնք անհրաժեշտ են էքսպլանանդումը բխեցնելու համար. էքսպլանանսը պետք է պարունակի ամենաքիչը մեկ պնդում, որն օրենք չէ, բայց բովան-

¹ Տե՛ս Hempel C. G., Oppenheim P. The Logic of Explanation. In: Readings in the Philosophy of Science. N. Y., 1953, էջ 322:

դակում է նախորդող իրավիճակների կամ ուղեկցող պայմանների նկարագրությունը,

(R₃) էքսպլանանսը պետք է ունենա էմպիրիկ բովանդակություն, այսինքն՝ պետք է մատչելի լինի (համենայն դեպս սկզբունքորեն) էքսպերիմենտի կամ դիտարկման միջոցով ստուգման կամ թեստավորման համար: Այս պայմանը պարունակվում է (R₁)-ում, քանի որ ենթադրվում է, որ էքսպլանանսը կարող է նկարագրել նաև որոշ էմպիրիկ փաստեր, ուստի (R₁)-ից հետևում է, որ էքսպլանանսը առաջացնում է էմպիրիկ բնույթի գոնե մեկ հետևություն: Այդ փաստը նշանակում է թեստավորման և էմպիրիկ բովանդակության հնարավորություն,

(R₄) էքսպլանանսը կազմող նախադասությունները պետք է ճշմարիտ լինեն²:

Գիտական բացատրության էքսպլանանսը բաղկացած է երկու բաղադրիչներից, որոնցից մեկը էքսպլանանսումին նախորդող պայմանները ներկայացնող դրույթներն են, իսկ մյուսը՝ գիտության ընդհանուր օրենքները, որոնք տրամաբանական տեսակետից կարելի է ներկայացնել $(x)(Px \rightarrow Qx)$ տեսքով, իսկ ամբողջ բացատրությունը կստանա հետևյալ տեսքը.

- 1) $(x)(Px \rightarrow Qx)$,
- 2) Pa ,
- 3) Qa ,

որտեղ առաջին պնդումն ընդհանուր օրենքն է, որը կարող է կիրառվել ցանկացած օբյեկտի նկատմամբ, երկրորդը հաստատում է, որ մասնավոր a օբյեկտն ունի P հատկություն: Այս երկու պնդումները միասին հնարավորություն են տալիս դեդուկտիվ եղանակով տրամաբանորեն բխեցնել երրորդ պնդումը՝ մասնավոր a օբյեկտն ունի Q հատկություն³:

Ինչպես երևում է գիտական բացատրության տրամաբանական կառուցվածքից, գիտական բացատրության ժամանակ միտքը հայտնի փաստերից գնում է դեպի դրանց պատճառներն ու հիմքերը, որոնք ներկայացված են էքսպլանանսում որպես ընդհանուր օրենքներ ու նախորդող պայմաններ, ապա կրկին վերադառնում է դեպի այդ փաստերը, բայց անպայման ենթադրում է նոր գիտելիքի կանխատեսման հնարավորությունը: Ավելին, կանխատեսման հնարավորությունը գիտական բացատրության համարժեքության չափանիշն է⁴: Դա պայմանավորված է գիտական բացատրության և կանխատեսման տրամաբանական կառուցվածքի նույնականությամբ և վկայում է դրանց միջև տրամաբանական համաչափության առկայության մասին. «Եթե E -ն տրված է, այսինքն՝ մենք գիտենք, որ E -ով նշանակված երևույթը տեղի ունի, և որ հետագայում ստացվել է համապատասխան C_1, C_2, \dots, C_k և L_1, L_2, \dots, L_r պնդումների բազմությունը, ապա մենք խոսում ենք տվյալ երևույթի բացատրության մասին: Եթե տրված են վեր-

² Տե՛ս Hempel C. G., Oppenheim P., նշվ. աշխ., էջ 321-322:

³ Տե՛ս Карнап Р. Философские основания физики. М., 1971, էջ 45:

⁴ Տե՛ս Hempel C. G., Oppenheim P., նշվ. աշխ., էջ 323:

ջին պնդումները, և E-ն բխեցված է մինչև երևույթի տեղի ունենալը, ապա մենք խոսում ենք կանխատեսման մասին»⁵:

Այն, որ տելեոլոգիական հարաբերությունը կանխատեսման հետ համատեղելի չէ, որ այստեղ առկա է բացատրության և կանխատեսման անհամաչափություն, այդ հարցով զբաղվողներից ոչ մեկի կասկածը չի հարուցում: Հարցն այն է, թե այդ դեպքում կարելի⁶ է դա համարել բացատրություն: Մեթոդաբանների մի մասն ընդունում է դրա նշանակությունը կենսաբանության մեջ և հասարակական գիտություններում⁶, իսկ մյուս մասն այն համարում է մինչգիտական բացատրության տարատեսակ⁷:

Բնագիտության մեջ, հատկապես կենսաբանությունում, տելեոլոգիական բացատրությունը հաճախ շփոթում են գործառնության (ֆունկցիոնալ) բացատրության հետ, քանի որ երկուսն էլ պատմականորեն կապվել են նպատակի հասկացության հետ: Իրականում գործառնության բացատրությունը պարունակում է օբյեկտի ու նրա գործառնության հարաբերությունը, որը կարող է արտահայտվել ինչպես պատճառահետևանքային օրենքով («Բոլոր x-երի համար, եթե x-ը սրտի աշխատանքն է, ապա x-ի գործառնությոնը արյան շրջանառությունն է»), այնպես էլ հետևանքապատճառայինով («Բոլոր x-երի համար, եթե x-ը լեղու արտադրությունն է, ապա x-ը լյարդի գործառնությոնն է»)⁸: Իսկ տելեոլոգիական սովորաբար համարվում են այն բացատրությունները, որոնց էքսպլանանսը պարունակում է որևէ հղում դեպի նպատակադրվածությունը, այդ պատճառով վերջիններս, ի տարբերություն գործառնության, ինտենցիոնալ բնույթ ունեն: Դրանք զուցե կարելի է բացատրություն համարել ողջախոհության մակարդակում, բայց մեթոդաբանական իմաստով դրանք ոչ լիարժեք են, ուստի գիտական բացատրություն համարել չի կարելի:

Հեմպելը վերլուծելով գործառնության բացատրությունները՝ առաջարկում է հետևյալ ընդհանուր սխեման.

(a) Ժամանակի t պահին s համակարգը գործառնվում է համարժեք c տիպի իրավիճակին, որը բնութագրվում է ներքին ու արտաքին յուրահատուկ պայմաններով:

(b) s-ը գործառնվում է c իրավիճակին համարժեք, եթե միայն բավարարվում է որոշակի անհրաժեշտ n պայմանը:

(c) Եթե s համակարգում առկա է i բնութագրությունը, ապա դրա հետևանքով n պայմանը կարող է բավարարվել:

(d) Հետևաբար, ժամանակի t պահին i բնութագրությունը առկա է s համակարգում⁹:

⁵ Նույն տեղում, էջ 322:

⁶ Տե՛ս **Braithwaite B. R.** Scientific Explanation, Cambridge, 1953, էջ 325-341, **Harris E. E.** Teleology and Teleological Explanation, JP, vol. 56, I, էջ 6-7, **Nagel E.** Problems in the Logic of Scientific Explanation, N.-Y., 1961, էջ 24-25:

⁷ Տե՛ս **Hempel C. G., Oppenheim P.**, նշվ. աշխ., էջ 327-329, **Никитин Е. П.** Объяснение-функция науки. М., 1970, էջ 99:

⁸ Տե՛ս **Никитин Е. П.**, նշվ. աշխ., էջ 97:

⁹ Տե՛ս **Hempel C. G.** The Logic of Functional Analysis.- In: Symposium on Sociological Theory, N.-Y., 1959, էջ 271:

Թեև Յենայելը գտնում է, որ ձևական տեսակետից նման եզրակացությունը հիմնավորված չէ, այնուամենայնիվ Մ. Ռյուզը իր «Կենսաբանության փիլիսոփայություն» մենագրության մեջ քննարկելով գործառութային բացատրության հեմայելյան վերլուծությունը, հիմնավորում է վերջինիս համապատասխանությունն ընդհանուր օրենքի միջոցով բացատրությանը: Ըստ նրա՝ էքսպլանանսում պահանջվող ընդհանուր օրենքը (b)-ն է, որն անհրաժեշտ պայման է (d)-ն բխեցնելու համար: Օրինակ՝ (a) «Կովերը լավ հարմարված են (այսինքն՝ ունեն ողջ մնալու և բազմանալու մեծ հավանականություն)», (b) «Կովերը լավ հարմարված են միայն այն դեպքում, եթե նորածին հորթերին կերակրելու ընդունակություն ունեն», (c) «Եթե կովերն ունեն կաթնագեղձեր, ապա կարող են կերակրել նորածին հորթերին», (d) «Ջետևաբար՝ կովերն ունեն կաթնագեղձեր»: Բայց եթե (c)-ն վերածնակերպենք հետևյալ կերպ՝ «Կովերը կարող են կերակրել նորածին հորթերին, եթե ունեն կաթնագեղձեր», ապա կունենանք համարժեք բացատրություն¹⁰: Իրոք, ստացվում է՝ «Բոլոր կովերի համար, եթե դրանք ունեն կաթնագեղձեր, ապա լավ հարմարված են»: Դա համապատասխանում է սիլլոգիզմի չորրորդ ձևին, ուստի՝ տրամաբանական հետևանքը միանգամայն բխեցնելի է տրամաբանական հիմքից, քանի որ եզրակացության համար պարունակում է ոչ միայն անհրաժեշտ, այլև բավարար պայմաններ: Այսպիսով, գործառութային բացատրությունները ևս միանգամայն արդարացիորեն կարող են գիտական բացատրություն համարվել:

Ե. Պ. Նիկիտինը ֆունկցիոնալ բացատրությունը տելեոլոգիականի հետ շփոթելու հիմնական պատճառը համարում է նպատակի և արդյունքի հասկացությունների ոչ ճիշտ օգտագործումը: Ըստ նրա՝ նման շփոթմունքը պատմականորեն պայմանավորված է այն բանով, որ որոշակի ավանդույթներից ելնելով, գիտական գործառութային բացատրությունը ժառանգել է նախագիտական տելեոլոգիական բացատրությունների լեզուն («նրա համար, որպեսզի», «այն նպատակով, որպեսզի»), իսկ դա խոչընդոտում է դրանց իրական բնույթի բացահայտմանը¹¹:

Յենայելյան մոդելի տեսակետից էքսպլանանսում մոտիվացիոն դրույթներ պարունակող մտային կառույցները չեն կարող համարժեք համարվել, քանի որ

1. առանձին մարդկանց կամ կուլեկտիվների գործողությունները անկրկնելի են, այդ պատճառով խոսել մոտիվացիոն բնույթի ընդհանուր օրենքների մասին, առնվազն անհեթեթ է, ուստի լավագույն դեպքում կարելի է խոսել ոչ լրիվ էքսպլանանսի մասին,

2. մոտիվացիոն դրույթը սկզբունքորեն ստուգման (թեստավորման) ենթակա չէ էքսպերիմենտի կամ դիտարկման միջոցով (ինչը նույնպես հեմայելյան մոդելի համարժեքության չափանիշներից է), քանի որ դիտարկման կամ էքսպերիմենտի օգնությամբ հնարավոր չէ ստույգ իմանալ ուրիշ մարդկանց մտադրություններն ու նպատակները, այլ կարելի է միայն ենթադրել, թե յուրաքանչյուր կոնկրետ դեպքում ինչով է թելադրված մարդու

¹⁰ Տե՛ս Рьюз М. Философия биологии. М., 1977, էջ 271-272:

¹¹ Տե՛ս Никитин Е. П., նշվ. աշխ., էջ 101:

գործողությունը, այսինքն՝ մեկնաբանել գործողության կատարման շարժառիթները,

3. գործողության մոտիվացիոն բնույթը ենթադրում է նպատակադրվածություն, հետևաբար, այն պետք է ենթարկվի ոչ թե պատճառական, այլ տելեոլոգիական վերլուծության¹²:

Այդպիսի տելեոլոգիական վերլուծության փորձ է արել ֆինն հայտնի տրամաբան Գ. Յ. ֆոն Վրիգտը: Յետևելով Էնսկոմբին՝ նա ուշադրություն է դարձնում Արիստոտելից եկող և «պրակտիկ սիլլոգիզմ» կոչվող մտահանգման տրամաբանական բնույթին, որը որակապես տարբերվում է ապացուցողական սիլլոգիզմից: «Պրակտիկ սիլլոգիզմի» մեծ նախադրյալը բովանդակում է ինչ-որ ցանկալի բան կամ գործողության նպատակ, փոքր նախադրյալում ինչ-որ գործողություն կապվում է ցանկալի արդյունքի հետ՝ որպես դրան հասնելու միջոց և, վերջապես, եզրակացության մեջ նշվում է միջոցի օգտագործման մասին՝ նպատակին հասնելու համար: Բայց եթե տեսական եզրակացության մեջ նախադրյալների հաստատումը անհրաժեշտորեն հանգում է եզրակացության հաստատմանը, ապա պրակտիկ եզրակացության մեջ միայն համաձայնությունը նախադրյալների հետ արդեն մղում է համապատասխան գործողության¹³: Օրինակ, եթե պրակտիկ եզրակացության նախադրյալներից մեկն ասում է, որ երեխան խաղալիքն է ուզում, իսկ երկրորդը, որ երեխան լաց է լինում, որպեսզի ստանա այն, կարելի է եզրակացնել, որ երեխան լաց է լինում, որովհետև ուզում է խաղալիքը: Բայց երեխայի լացի պատճառը, այսինքն՝ այն նպատակը, որ հետապնդում էր երեխայի լացը, պարզ է դառնում ռետրոսպեկտիվ ձևով՝ միայն այն բանից հետո, երբ արդեն գործողությունը կատարված է, այսինքն՝ երբ երեխան, խաղալիքը ստանալով, դադարեցրել է լացը: Յետևաբար, մինչ այդ մնում է միայն մեկնաբանել երեխայի լացի պատճառը, որը կարող էր լրիվ այլ նպատակ հետապնդել և, համապատասխանաբար՝ այլ մեկնաբանություն ստանալ: Օրինակ՝ երեխայի լացը կարող էր մեկնաբանվել որպես քաղցն արտահայտելու կամ իր վրա ուշադրություն հրավիրելու միջոց: Ուստի պրակտիկ եզրակացությունը երեխայի լացի համարժեք բացատրությունը չէ, այլ՝ *մեկնաբանությունը*:

Մեկնաբանության դեպքում ևս, ինչպես գիտական բացատրության ժամանակ, միտքը հայտնի փաստերից ուղղվում է դեպի դրանց պատճառների ու հիմքերի բացահայտումը, որից հետո կրկին վերադառնում է դեպի այդ փաստերը, բայց, ի տարբերություն բացատրության, դրանում արտահայտված են էքսպլանանդումի առաջացման ոչ թե բավարար, այլ միայն անհրաժեշտ պայմանները, քանի որ նրա էքսպլանանսը լրիվ չէ¹⁴: Մեկնաբանության մեջ կարող է բացակայել կամ ընդհանուր օրենքը, կամ էքսպլանանդումի առաջացմանը նախորդող պայմանների լրիվ նկարագրությունը, չնայած դրան՝ տրամաբանական անհրաժեշտությունը հնարավորություն է տալիս մեկնաբանության էքսպլանանդումում նկարագրված

¹² Տե՛ս **фон Вригт Г. Х.** Логико-философские исследования. М., 1986, էջ 64:

¹³ Տե՛ս **Hempel C. G., Oppenheim P.**, նշվ. աշխ., էջ 321:

¹⁴ Տե՛ս **Ս. Վ. Վարդանյան**, Գիտական բացատրության և մեկնաբանության մեթոդների փոխհարաբերությունների հարցի շուրջ // Բանբեր Երևանի համալսարանի, 2003, № 2, էջ 22-23:

փաստը կապել էքսպլանանսում նկարագրված փաստերի հետ, որի շնորհիվ դա համապատասխան մեկնաբանություն ստանալով՝ իմաստավորվում, հասկանալի է դառնում:

Պրակտիկ սիլլոգիզմում էքսպլանանդումները և էքսպլանանսները միմյանց հետ կապվում են ոչ թե ընդհանուր օրենքների, այլ պրակտիկ եզրակացության նախադրյալները կազմող սինգուլյար ասույթների ամբողջության միջոցով, այդ պատճառով տրամաբանական տեսակետից դրանք միմյանցից անկախ են, ուստի էքսպլանանսում արտահայտված չեն էքսպլանանդումի գոյության բավարար պայմանները: Հաճախ, հատկապես պատմական ուսումնասիրությունների ժամանակ, եզրակացությունը, որը նախադրյալներում ձևակերպված մոտիվացիոն հիմքից է բխում, ոչ թե ինքը էքսպլանանդումն է, այլ ինչ-որ միջանկյալ իրադարձություն կամ գործողություն, որը այլ պրակտիկ եզրակացության մոտիվացիոն հիմքի մեջ է մտնում այլ միջանկյալ եզրակացությամբ, և այդպես՝ շարունակվող քայլերի շարքի միջոցով, մինչև արդյունքում ստացվում է ինքը՝ էքսպլանանդումը¹⁵: Պատմական ուսումնասիրությունների համար հենց այդպիսի մեկնաբանության մոդել է առաջադրում Դրեյը՝ անվանելով դա «ռացիոնալ բացատրություն» և միաժամանակ նշելով, որ բացատրության ռացիոնալ մոդելը չի պահանջում ոչ այն, որ պատմական գործչի մոտիվները և համոզմունքները որոշակի օրենքի միջոցով գործողությունների անհրաժեշտ պայմանների շարքը դասվեն, ոչ այն, որ դրանց բավարար պայմանի նշանակություն տրվի: Արարքի բացատրության համար միանգամայն բավական է, որ նրա հիմքում ընկած մոտիվները լինեն բանականորեն անհրաժեշտ պայման, այսինքն՝ ցույց տրվի, որ առանց այդ պայմանի պատմական գործիչը հիմք չէր ունենա անելու այն, ինչ արեց: Բայց դա չի նշանակում, որ նրա արարքը կարելի էր կանխագուշակել՝ ելնելով այդ արարքի բավարար պայմանի իմացությունից¹⁶:

Տելեոլոգիան ավանդաբար հակադրում են պատճառականությանը: Չնայած դրան՝ տելեոլոգիական հարաբերությունը կարող է արտահայտվել նաև պատճառականության տերմիններով: Պատճառականությունը սովորաբար արտահայտվում է «P, որովհետև Q» ձևով, իսկ տելեոլոգիական հարաբերությունը՝ «P, որպեսզի Q» ձևով: Օրինակ, «Երեխան լալիս է, որպեսզի ստանա խաղալիքը» տելեոլոգիական դատողությունը պատճառական լեզվի շրջանակներում կարելի է ներկայացնել «Երեխան լալիս է, որովհետև ուզում է ստանալ խաղալիքը» ձևով: Ավելին, ըստ Նիկիտինի, «նպատակաուղղված գործունեություն» արտահայտությունը պետք է վերծանվի ոչ թե որպես «դեպի նպատակն ուղղված գործունեություն», այլ որպես «նպատակով ուղղորդվող գործունեություն»: Դրանով իսկ, տելեոլոգիական բացատրությունը դառնում է պատճառական բացատրության տարատեսակ¹⁷: Սակայն նույնիսկ այդ դեպքում մեթոդաբանական տեսակետից դա բացատրություն չէ, այլ մեկնաբանություն, քանի որ այդ դեպ-

¹⁵ Տե՛ս фон Вригт Г. X., նշվ. աշխ., էջ 171:

¹⁶ Տե՛ս Дрей У. Еще раз к вопросу об объяснении действий людей в исторической науке // «Философия и методология истории». М., 1977, էջ 65:

¹⁷ Տե՛ս Никитин Е. П., նշվ. աշխ., էջ 100:

քում գործ ունենք ոչ լրիվ էքսպլանանսի հետ, որում բացակայում է ընդհանուր օրենքը: Այսպիսով, կարելի է պնդել, որ այն, ինչ մեթոդաբանական գրականության մեջ հաճախ անվանում են տելեոլոգիական բացատրություն, իր տրամաբանական կառուցվածքի տեսակետից իրականում մեկնաբանություն է:

Տելեոլոգիայի ամենանշանավոր ներկայացուցիչներից մեկը ինչպես նոր ժամանակաշրջանում, այնպես էլ ողջ փիլիսոփայության պատմության ընթացքում, Արիստոտելից հետո Չեգելն է: Նա տելեոլոգիական հարաբերությունը գնահատում է որպես «Մի մտահանգում, որում սուբյեկտիվ նպատակը որոշակի միջին տերմինի միջոցով շաղկապվում է իրենից դուրս գտնվող օբյեկտիվության հետ. այդ միասնությունը մի կողմից նպատակաուղղված գործունեություն է, մյուս կողմից՝ նպատակին անմիջականորեն ենթարկվող օբյեկտիվություն, միջոց»¹⁸: Ըստ այդմ՝ բացատրության էությունը ոչ թե այն է, որ երևույթները իրական պատճառների վերհանմամբ դարձվեն կանխատեսելի, այլ ավելի շուտ այն, որպեսզի դրանք դարձվեն տելեոլոգիապես հասկանալի: Ըստ Չեգելի՝ «Նպատակը սպեկուլյատիվ հասկացում է պահանջում»¹⁹, մինչդեռ մեխանիստական բացատրությունը ո՛չ բնության երևույթների, ո՛չ պատմության լրիվ հասկացում չի տալիս. բացատրությունը վերջնական բնույթ է ստանում միայն այն դեպքում, երբ տրված է տելեոլոգիական հեռանկարը²⁰:

Ժամանակակից մեթոդաբանական գրականության մեջ արդեն տարբերակվում է դետերմինացիայի երկու տիպ, որոնցից մեկը կապվում է կանխատեսելիության գաղափարի հետ և համարվում է նախադետերմինացիա, իսկ մյուսը կապվում է *ex post facto*, այսինքն՝ գործողության ավարտից հետո, իմաստավորման գաղափարի հետ և համարվում է հետդետերմինացիա²¹: Տելեոլոգիական հարաբերությունը, բնականաբար, կարող է բնութագրվել որպես հետդետերմինացիա, քանի որ մեկնաբանելով իմաստավորում, հասկանալի է դարձնում գործողությունն արդեն դրա ավարտից հետո: Չետևաբար, տելեոլոգիական հեռանկարն իր իմացաբանական նշանակությամբ ևս բացատրություն համարել չի կարելի, բայց այս իմաստով նույնպես դա միանգամայն համապատասխանում է մեկնաբանության մեթոդին:

Այսպիսով, այն մտային կառույցները, որոնց նախադրյալներն արտահայտում են նպատակադրվածություն, մեթոդաբանական իմաստով ոչ միայն բացատրություն համարել չի կարելի, այլև իրենց թե՛ տրամաբանական կառուցվածքով, թե՛ նշանակությամբ լրիվ հակադիր են գիտական բացատրությանը: Մինչդեռ, քանի որ դրանք տրամաբանական տեսակետից ունեն ոչ լրիվ էքսպլանանս, իսկ իմացաբանական տեսակետից իմաստավորում, հասկանալի են դարձնում գործողությունը, կարող են դիտվել որպես մեկնաբանություն: Ավելին, դրանք մեկնաբանություններ են տելեոլոգիական հիմքով:

¹⁸ Гегель. Энциклопедия философских наук. Т. 1. М., 1974, с. 393.

¹⁹ Նույն տեղում, էջ 395:

²⁰ Гегель. Наука логики. Т. 2. М., 1971, с. 208-221.

²¹ Տե՛ս фон Вригт Г. X., նշվ. աշխ., էջ 189:

СУСАН ВАРДАНЯН – Телеологическое объяснение или истолкование? –

Телеологическое объяснение относится к числу спорных вопросов научного познания. В статье представлены две модели научного объяснения, причинная и функциональная, и показана их логическая несовместимость с той умственной конструкцией, которую называют “телеологическим объяснением”. На самом деле это последнее есть не что иное, как истолкование, и это обосновывается в статье с точки зрения принципов причинности и целеполагания.

SUSAN VARDANYAN – Teleological Explanation or Interpretation? –

The problem of teleological explanation is one of the controversial problems of scientific cognition. The causal and functional models of scientific explanation are presented in the article and their incompatibility with the mental construction called “teleological explanation is shown.” Actually the latter is an interpretation, as it is justified from the point of view of the principles of causation and goal-setting.